Ասլանը լռութեամբ լսում էր, երեւում էր, ոչ այնքան հետաքրքրոելով: Կարծես նա այդ բոլորը գիտէր, եւ գիտէր աւելի լաւ, քան թէ վարպետ Փանոսը: Բայց իմ վրդովմունքը չափ չունէր. «այդ ինչ դրութիւն է, մտածում էի ես, աւելի լաւ չէ՞ր լինի, որ մարդիկ ամենեւին գոյութիւն չունենային, քան թէ այդպիսի անպատիւ կեանքով ապրէին»:

Մենք շարունակում էինք գնալ երկար, ծառազարդ փողոցներով: Վարպետ Փանոսը աւելացրեց.

— Ահա այդ գիշակեր խնամակալներն են, որոնք պարտքով փող են տալիս իրանց «գաւուրներին», երբ նրանք օտար երկիր են գնում բախտ որոնելու, եւ աւելի շուտ են ճանապարհ դնում նրանց, երբ նրանց ընտանիքի մէջ կար մի սիրուն կին կամ գեղեցիկ աղջիկ: Գաղթականը ճանապարհի ծախքի կարօտ է, բացի դրանից նա պէտք է շատ ու քիչ փող թողնէ իր տան ապրուստի համար, այդ բոլորը նա պարտքով վոր է առնում իր խնամակալից: Նրա պարտքը սկզբում մի քանի հարիւր ղուրուշ է լինում, բայց այդ մի քանի հարիւրը տարիների ընթացքում աճում է, բազմանում է եւ շատ հազարներ է դառնում: Այնուհետեւ պարտքից ազատբելու հնար չկայ: Պարտքի արմատը միշտ մնում է միեւնոյնը, հատուցւում է տոկոսը միայն: Իսկ այդ անիծեալ տոկոսը վճարելու համար պէտք են մի քանի ուժեղ տղամարդիկ, որ Կ. Պոլսի մաքսատներում կամ քարոանսարաներում համալութիւն անէին: Ամբողջ Վանի մէջ չկայ մի ընտանիք, որի մի քանի անդամները պանդխտութեան մէջ չլինէին: Առաջ գնում էին միայն տղամարդիկը, իսկ այժմ կանայք նոյնպէս սկսել են օտար երկրներում բախտ որոնել: Վանէցի կինը, որ իր տան ծածկի տակից չէր դուրս գալիս, որ նրա երեսը մի ուրիշ մարդ չտեսնէ, այժմ պանդխտութեան մէջ վատնում է իր աւանդական համեստութիւնը...

Ասլանը ընդհատեց վարպետի տխուր պատմութիւնը, հարցնելով.

— Կարծեմ այստեղի հայերից եւս կան այնպիսիները, որոնք մահմեդական խնամակալների պաշտօն են կատարում...

— Կան, եւ նրանց թիւը սակաւ չէ: Այդ անիրաւները անունով միայն հայ են, իսկ գործով կատարեալ ենիչերի...

— Բայց ինչպէ՞ս է, որ նրանք չեն թաքցնում իրանց հարստութիւնը եւ փառաւոր կերպով ապրում են:

— Նրանք էլ ունեն իրանց պաշտպանները, աւելի բարձրաստիճան անձիքներից, որոնց հովանաւորութիւնը վայելելով, տկարներին խեղդում են, իսկ հզօրներին տուրք են վճարում...